

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈԼՈՐՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻ**

ՀՏԴ 338.48

DOI 10.56246/18294480-2022.12-22

ՍԻՆԱՆՅԱՆ ԱՐԵԳ

Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
կառավարման և ֆինանսների ամբիոնի ասպիրանտ,
«Աղվենտուրես» տուրիստական գրասենյակի մենեջեր
Էլիոսյի *hauugt' aregsinanyan@mail.ru*

Շուկայական տնտեսության պայմաններում զբոսաշրջության տարածքային զարգացմանը նպաստում է այդ ոլորտի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը: Ակնհայտ է, որ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է արտաքին և ներքին միջավայրի բազմաթիվ գործոններով, հատկապես անհրաժեշտ է նվազագույնի հասցնել գործունեության ծախսերը: Այս առումով հոդվածում փորձ է կատարվել մշակել և լուծել տնտեսամաթեմատիկական մոդել, որը հնարավորություն կընձեռի հիմնավորել այդ կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման վրա կատարված ծախսերի նվազեցման անհրաժեշտությունը և նվազեցման իրականացումը, որը էական ազդեցություն կունենա զբոսաշրջության տարածքային զարգացման գործում: Արտաքին և ներքին միջավայրի գործոնները, որոնք ազդում են կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վրա, մասնագիտական գրականության մեջ անվանում են բիզնես միավոր, որը փաստորեն որոշում է կազմակերպության դիրքը շուկայում, հետևաբար նրա ֆինանսական կայունությունը: Այդ պատճառով առանց դրանց գնահատման հնարավոր չէ իրականացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության ցուցանիշների վերլուծության գնահատում:

Հողվածում ներկայացվում է բիզնես միջավայրի կառուցվածքը: Հեղինակն առաջարկում է ՀՀ Գեղարքունիքի մարզի զբոսաշրջային կազմակերպությունների կողմից կարարվող ծախսերի նվազեցման տնտեսաճանաչական մոդելը: Նշված մոդելը կիրառվել է հեղինակի կողմից ուսումնասիրված երեք՝ «Էթնա», «Ջոյ», «Արարատ» կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը գնահատելիս:

Բանալի բառեր՝ շուկա, զբոսաշրջություն, արտաքին և ներքին միջավայրի գործոններ, մոդել, համախառն եկամուտ, ծախսեր, զուտ շահույթ:

Շուկայական հարաբերությունների խորացման պայմաններում զբոսաշրջության տարածքային զարգացմանն էապես նպաստում է այդ ոլորտի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը: Ինչպես հայտնի է ՀՀ-ն զբոսաշրջության տարածքային զարգացման նպատակով մշակել է ռազմավարություն, որը իր մեջ ներառում է այն ուղիները, որոնք կնպաստեն զբոսաշրջության տարածքային զարգացմանը, մասնավորապես՝

- բարելավել ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակը,
- ընդլայնել Հայաստանի այցելությունների թիվը
- երկարաձգել զբոսաշրջիկների՝ Հայաստանում մնալու տևողությունը և այլն¹:

Ակնհայտ է, որ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ներքին և արտաքին միջավայրի բազմաթիվ գործոններից: Արտաքին միջավայրի գործոնները կարող են նպաստել կամ խոչընդոտել նրանց զարգացմանը:

Կազմակերպությունների զարգացման ելակետային պայմաններն են կապիտալի ներդրման արդյունավետությունը, ոլորտի ընտրությունը, զուտ շահույթի ապահովումը, սեփականության իրավունքի պաշտպանվածությունը և այլն: Տնտեսական ազատությունը բացարձակ չէ, քանի որ կազմակերպության ինքնուրույնությունը սահմանափակվում է մրցակիցների գործողություններով, ուստի նրանք պետք է հաշվի առնեն շուկայի խիստ պահանջները:

¹ Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030 Նոյեմբեր, 2019, էջ 6:




Հետևաբար ցանկացած կազմակերպության գործունեության գնահատումը չի կարելի հանգեցնել սուկ հաշվապահական հաշվետվությունների վերլուծման, քանզի դրանք միայն արտացոլում են որոշակի ժամանակահատվածի իրական պատկերը (կազմակերպության գույքը, ֆինանսական վիճակը և այլն) և պատկերացում չեն տալիս կազմակերպության հեռանկարային զարգացման վերաբերյալ:

Հատկանշական է, որ բարձր լիկվիդայնությունը օպտիմալ է տվյալ ճյուղի հիմնական և շրջանառու միջոցների կառուցվածքային, ֆինանսական աղբյուրների ձևավորման համար, որոնք հանդիսանում են կազմակերպության արդյունավետ գործունեության գործոններ: Ուստի վերլուծությունը և գնահատումը պետք է իրականացնել՝ հաշվի առնելով գործունեության արդյունավետությունը բնութագրող գործոնները կամ ներքին և արտաքին միջավայրերի գործոնների համալիրը:

Արտաքին և ներքին միջավայրերի գործոնները, որոնք ազդում են կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վրա, մասնագիտական գրականության մեջ անվանում են բիզնես միավոր: Բիզնես միավորը փաստորեն որոշում է կազմակերպության դիրքը շուկայում, հետևաբար նրա ֆինանսական կայունությունը: Այդ պատճառով առանց դրանց գնահատման հնարավոր չէ իրականացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության ցուցանիշների վերլուծության գնահատում:

Բիզնես միջավայրի կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 1-ում: Որպես կանոն, բիզնես միավորի վերլուծությունը և կազմակերպության շուկայական դիրքը որոշվում է մարքեթինգային հետազոտությունների միջոցով: Սակայն կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության համալիր վերլուծությունը ներառում է արտադրական և ֆինանսական գործոնները: Հետևաբար համալիր վերլուծություն իրականացնելիս պետք է հաշվի առնել կազմակերպության ենթահամակարգերը, որոնք սերտորեն փոխկապակցված են ինչպես միմյանց, այնպես էլ արտաքին միջավայրին: Կազմակերպությունների գործունեությունը և ենթահամակարգերը պետք է նպատակաուղղել նրանց ֆինանսական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Կազմակերպության գործունեության արդյունավետու-

թյունը, մեր կարծիքով, հնարավոր է գնահատել վերլուծության վեց փուլերով, հետևյալ բիզնես միջավայրում.²



Գծապատկեր 1. Բիզնես միջավայրի կառուցվածքը:

Առաջին փուլում որոշվում է հետազոտության նպատակը և պայմանները: Կազմակերպության տնտեսական գործունեությունը դիտարկվում է որպես երեք փոխկապակցված տարրերից՝ ռեսուրսներից, արտադրական պրոցեսից և պատրաստի արտադրանքից կամ մատուցվող ծառայություններից բաղկացած համակարգ: Այս համակարգում մուտք են համարվում ապրանքանյութական (աշխատանքի միջոցներ և աշխատանքի առարկաներ) և աշխատանքային ռեսուրսներն ու հոսքերը: Որպես ելք ընդունվում են պատրաստի արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների հոսքերը: Կազմակերպության գործունեության նպատակն է ապահովել կայուն ֆինանսա-

² Տե՛ս Առաքելյան Վ. Հ., Մելիտոնյան Ա. Բ., Առաքելյան Ի.Վ., Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետության գնահատում: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2008:



կան վիճակ, այսինքն՝ քննարկվող ժամանակահատվածում ստանալ հնարավորինս բարձր արդյունք, առավելագույն շահույթ: Ուստի համակարգային վերլուծության խնդիրն է ուսումնասիրել և վերլուծել բարձր շահութաբերություն ապահովող բոլոր գործոնները՝ հիմք ընդունելով կազմակերպության գործունեության տնտեսագիտական սկզբունքը՝ առկա ռեսուրսների օգտագործման շնորհիվ թողարկել առավելագույն արտադրանք կամ մատուցել ծառայություններ:

Երկրորդ փուլում իրականացվում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշների հավաքագրում, երրորդ փուլում կազմվում է համակարգի ընդհանուր գծապատկերը, որոշվում են նրա գլխավոր բաղադրամասերը, գործառույթները, փոխադարձ կապերը, մշակվում են ենթահամակարգերի կառուցվածքները:

Չորրորդ փուլում սահմանվում են գործոնների քանակական բնութագրերը և դրանց փոխադարձ կապերը:

Հինգերորդ փուլում, ելնելով նախորդ փուլերից ստացված տեղեկատվությունից, կառուցվում է համակարգի մոդելը: Այնուհետ մոդելի մեջ ներմուծվում են կազմակերպության տնտեսական գործունեության կոնկրետ տվյալները և ստանում մոդելի չափորոշիչների թվային արտահայտությունը:

Վերլուծության ավարտական՝ վեցերորդ փուլը կազմում են աշխատանքները մոդելի հետ: Այս փուլը ներառում է տնտեսական գործունեության արդյունքների օբյեկտիվ գնահատականները, գործունեության արդյունավետության բարձրացման պահուստների հայտնաբերումը:

Համակարգային մոտեցումը կարևոր պահանջ է տնտեսական գործունեության գնահատման ժամանակ: Պարզ է, որ տնտեսական գործունեությունը բնութագրվում է մի շարք ցուցանիշների և գործակիցների միջոցով: Սակայն յուրաքանչյուր այդպիսի ցուցանիշների վրա ազդում է գործոնների մի ամբողջ համակարգ:

Արտադրական գործոնների ուսումնասիրությունը և գնահատումը, արդյունավետության ընդունված ցուցանիշների վրա դրանց ազդեցության որոշումը հնարավորություն է տալիս բացահայտել արտադրական պահուստները:

Հարկ է նշել, որ գործոնները տարբեր պատճառներ են, որոնք ազդում են տվյալ ցուցանիշի վրա: «Գործոն» և «ցուցանիշ» հասկացությունների տարբերությունը պայմանական է, քանի որ, կախված ուսումնասիրության

նպատակից, տվյալ ցուցանիշը մյուս մեթոդի կիրառման դեպքում կարող է դիտարկվել որպես գործոն այլ ցուցանիշի համար:

Գործոնները լինում են ներքին և արտաքին: Ներքին են կազմակերպության աշխատանքի արդյունքները որոշող գործոնները: Արտաքին են համարվում այն գործոնները, որոնք կախված չեն արտադրական կոլեկտիվի գործունեությունից, սակայն որակական ազդեցություն են ունենում տվյալ կազմակերպության արտադրական և ֆինանսական ռեսուրսների օգտագործման մակարդակի վրա:

Գործոնների դասակարգումը հնարավորություն է տալիս.

1. ճիշտ գնահատել կազմակերպության գործունեության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա արտաքին և կողմնակի գործոնների ազդեցությունը,

2. թույլ է տալիս մոդելավորել տնտեսական գործունեությունը,

3. իրականացնել արդյունավետությունը բարձրացնող քայլեր՝ ապահովելով արդյունքների և ծախսերի խելամիտ հարաբերակցություն: Այդ ծախսերի մի մասը անվանվում են ընթացիկ ծախսեր և վերագրվում են արտադրանքի կամ ծառայության ինքնարժեքին, մյուսները՝ կապիտալ, որոնք ավելացնում են կազմակերպության գույքի արժեքը: Բոլոր ծախսերն ուղղված են արդյունքի ստացմանը: Ուստի դրանց համեմատումը կարող է բնութագրել կազմակերպության գործունեության արդյունավետությունը:

Տնտեսական գործունեության արդյունավետության ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ է դասակարգել ծախսերը և արդյունքները:

Զբոսաշրջային կազմակերպության ծախսերը դասակարգվում են հետևյալ հոդվածներով.

- աշխատավարձի ֆոնդ,
- գրասենյակի վարձակալություն (եթե հիմնական ֆոնդերի մաս չէ),
- ամորտիզացիոն ծախսեր (կահույք, համակարգիչներ, տպիչներ և այլն),
- կոմունալ ծախսեր,
- էլեկտրաէներգիայի ծախսեր,
- կապի միջոցներ (հեռախոս, հեռապատճեն, համացանց, հատուկ կապ),
- գրենական պիտույքներ,
- մարքեթինգ,
- գործուղումներ,

- մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսներին,
- արտադրական ուսուցում (վերապատրաստում),
- ադմինիստրատիվ ծախսեր (լիցենզիա, սերտիֆիկատներ, անդամավճարներ),

այլ ծախսեր (չնախատեսված ծախսեր)³:

Արդյունքների դասակարգումը դրամական արտահայտությամբ բնութագրում է իրացումից հասույթի մեծությունը: Զբոսաշրջային կազմակերպության եկամուտները (հասույթը) ձևավորվում է հետևյալ հիմնական ճանապարհներով.

1. Կոմիսիոն միջնորդավճար զբոսաշրջային ոլորտի մատակարարներին տրամադրված ծառայությունների դիմաց: Դրանք բնորոշ են հիմնականում հյուրանոցային տնտեսություններին, տրանսպորտային ընկերություններին, սննդի, ժամանցի և այլ վայրերին:

Միաժամանակ ընկերությունը կարող է միջնորդավճարի դիմաց վաճառել տրանսպորտային և այլ ծառայություններ՝ ուղիղ վճարում կատարելով ծառայությունը տրամադրող սուբյեկտներին, և այդ դեպքում հաճախորդը վճարում է հենց զբոսաշրջային ընկերությանը, որից հետո վերջինս մատակարարի հետ կատարում է վերահաշվարկ: Եթե ընկերությունը զբաղվում է նաև օդանավի տոմսերի վաճառքով, ապա դրա դիմաց ավիաընկերություններից ստանում է կոմիսիոն վարձատրություն 3-9%՝ ըստ պայմանագրում նախատեսված պայմաններին:

2. Եկամտի նորմատիվային հավելավճար, որը գոյանում է վաճառքի գնի և փաթեթի ինքնարժեքի տարբերությունից: Մի շարք երկրներում այս հավելավճարի չափը նորմավորված է պետության կողմից և չպետք է գերազանցի որոշակի չափաբաժինը, որը կազմում է 20-25%: Հայաստանում այս հավելավճարը ձևավորվում է տարերայնորեն և վերահսկման ենթակա չէ: Եկամտի այս աղբյուրը կազմում է ներկայումս գործող զբոսաշրջային ընկերությունների օգուտի հիմնական մասը:

3. Ծառայությունների հավելյալ վարձավճար: Այս աղբյուրը հիմնականում ձևավորվում է ամենատարբեր հարակից ծառայությունների համար հաճախորդներից լրացուցիչ վարձատրություն վերցնելու ճանապարհով (տոմսերի, ապահովագրության և ճամփորդական այլ փաստաթղթերի առա-

³ Տե՛ս Տնրիստիկա, Ի. Վ. Զորին, Վ. Ա. Կվարտալնով 2008, էջ 76:

քում հաճախորդներին, տեղեկատվական ծառայություն, ավտոտրանսպորտ և այլն):

4. Համակցված (կոմբինացված) ծառայություններից կամ տուրերից ստացվող եկամուտներ:

Ջրոսաշրջային կազմակերպության արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշ է հանդիսանում զուտ շահույթը: Հետևաբար Ջրոսաշրջային կազմակերպության գործունեության արդյունավետության չափանիշի քանակական բնութագիրը կարելի է տալ վերջնական արդյունքի մեծացմամբ և հիմնական կապիտալի ծախսերով: Հաշվեկշռային շահույթը ընդհանրացնող, սակայն միջանկյալ արդյունք է:

Հարկի վճարումից հետո մնում է զուտ շահույթը, որը հանդիսանում է վերջնական արդյունք կազմակերպության գործունեության համար և նպաստում է նրա սեփական կապիտալի աճին:

Հարկ է նշել, որ շահույթի ավելացումը հնարավորություն է ընձեռում կազմակերպություններին բարձրացնելու գործունեության արդյունավետությունը: Հետևաբար կազմակերպությունների ղեկավարության համար ռազմավարական խնդիր է շահույթի մակարդակի ավելացումը ի հաշիվ ծառայությունների ծավալների աճի, կատարված ծախսերի նվազեցման, ծառայությունների որակի բարձրացման: Ակնհայտ է, որ ծախսերի նվազեցումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է շահույթի աճին:

Մեր կողմից ստորև առաջարկվել է Գեղարքունիքի մարզի Ջրոսաշրջային կազմակերպությունների կողմից կատարվող ծախսերի նվազեցման տնտեսամաթեմատիկական մոդելը:

Այսպես, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջրոսաշրջային կազմակերպությունների քանակը նշանակենք n -ով, որոնք մատուցում են K_i ծավալով Ջրոսաշրջային ծառայություններ, ընդ որում X_j ծավալի ծառայություն մատուցելիս j -րդ ($j=1, 2, \dots, n$) կազմակերպության ընդհանուր ծախսերը կլինեն $(1/Ci^2) Xi^3$, որտեղ Ci -ն որոշվում է փորձարարական տվյալների հիման վրա: Կազմակերպության առջև ծագում է հետևյալ խնդիրը՝ ինչ ծավալի ծառայություն պետք է մատուցի j -րդ ($j=1, 2, \dots, n$) կազմակերպությունը, որպեսզի ծախսերը լինի նվազագույնը⁴: Խնդրի պայմաններից ելնելով՝ կազմենք տվյալ խնդ-

⁴ Տե՛ս Սահակյան Մ. Ա., Սարգսյան Լ. Հ., Սարգսյան Ս. Դ, Տոնոյան Ռ. Ն. Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, Երևան: ԷԿԱԳՄԱՀԲ, 1997, էջ 175-176:

րի մաթեմատիկական մոդելը: Այն կունենա հետևյալ տեսքը՝

$$f(x) = \sum_{j=1}^n (1/C_j^2) X_j^3 \rightarrow \min$$

$$\sum_{j=1}^n X_j = Ki, X_j \geq 0, j = (1, 2, \dots, n)$$

Այնուհետև

կազմենք

Լագրաժի

ֆունկցիան

$$L(\bar{x}, \lambda) = f(x) + \lambda \left(K_i - \sum_{j=1}^n x_j \right), \text{ որից հետո հաշվենք } L(\bar{x}, \lambda_i) \text{ ֆունկցիայի ա-}$$

ծանցյալները՝ ըստ $X_j (j = 1, 2, \dots, n)$ | λ_i փոփոխականները և հավասարեց-
նենք զրոյի:

$$\begin{cases} L_{x_j} = 3(x_j^2 / C_j^2) - \lambda = 0 \\ L_{\lambda_i} = K_i - \sum_{j=1}^n X_j = 0 \end{cases}$$

Ստացված հավասարումների հանրագումարից գտնում ենք X_j փոփո-
խականի օպտիմալ X_j^* արժեքը,

$$X_j^* = C_j \sqrt{\lambda_i / \sqrt{3}}, j = 1, 2, \dots, n \quad \text{որտեղից} \quad \sqrt{\lambda_i} = \sqrt{3} \cdot K / \sum_{j=1}^n C_j$$

Հետևաբար, $X_j^* = C_j K_i / \sum_{j=1}^n C_j$ նպատակային ֆունկցիայի նվազա-
գույն արժեքն է

$$f(x^*)_{\min} = K_i^3 / (\sum_{j=1}^n C_j)^2 :$$

Ըստ խնդրի պայմանի՝ յ-րդ կազմակերպությունը պետք է մատուցի

$$X_j^* = C_j K_i / \sum_{j=1}^n C_j$$

ծավալի ծառայություն, այս դեպքում ընդհանուր ծախսերը կկազմեն

$$K^3 / (\sum_{j=1}^n C_j)^2$$

որն էլ կլինի նվազագույնը:

k = 10;


n = 4;

$$s = \frac{k^3}{(\sum_{j=1}^n c)^2};$$

σ = 0.3 * s;

$$f[c_, m_] = \frac{1}{\sqrt{2 * \pi * \sigma}} * \int_0^m e^{-(m-s)^2 / (2 * \sigma^2)} dm;$$

Plot[{f[1, m], f[2, m], f[3, m], f[4, m]}, {m, 0, 40}, PlotRange -> {0, 1}]



Գծապատկեր 2. Նվազագույն ծախսերի և հավանականության փոխադարձ կապը:

Նշված մոտեցմամբ լուծման արդյունքը բերված է ստորև: Ինչպես նկատում ենք, երբ մատուցվող ծառայությունների ծավալը աճում է, իսկ ծավալի աճի հավանականությունը ձգտում է մեկի, ապա կատարվող ծախսերը ձգտում են նվազագույնի:

Նշված մոտեցումը տարածենք մեր կողմից ուսումնասիրված երեք՝ «Էթնա», «Զոյ», «Արարատ» կազմակերպությունների վրա: Ինչպես նկատում ենք, այս մոդելը հնարավորություն է ընձեռում կազմակերպություններին ապահովել առավելագույն մեծության զուտ շահույթ ծախսերի նվազեցման հաշվին: Ստորև ներկայացված աղյուսակում 1-ում բերված են ուսումնասիրվող կազմակերպությունների կողմից ծախսերի նվազեցման հաշվին ստացված զուտ շահույթի մեծության հաշվարկը:

Աղյուսակ 1.

Ուսումնասիրվող կազմակերպությունների կողմից ստացվող զուտ շահույթի հաշվարկի մեխանիզմը:

Ցուցանիշները	Էթնա	Զոյ	Արարատ
	2019	2019	2019
Համախառն եկամուտը (Xj) դրամ	246853789	2860019	11384706
$K^3 / \sum_{j=1}^n C_j$ Ծախսերը դրամ	228626193	2398620	10360082
Զուտ շահույթը՝ դրամ	16404836.4	415259.1	922161.6

Ինչպես ցույց են տալիս կատարված հաշվարկների արդյունքները, 2019 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի զբոսաշրջության կազմակերպությունները ծախսերի նվազեցման հաշվին ապահովել են զուտ շահույթ, որն էլ վկայում է նրանց գործունեության արդյունավետության մասին:

Այսպիսով, զբոսաշրջության ոլորտի տարածքային զարգացումանը կարող են նպաստել այդ ոլորտի կազմակերպությունների ֆինանսական գործունեության արդյունավետության բարձրացմանը, հետևաբար և կազմակերպությունների ֆինանսական կայունությանը, որն էլ էական ազդեցություն կունենա զբոսաշրջության հետագա զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Վ. Հ., Մելիտոնյան Ա. Բ., Առաքելյան Ի. Վ., Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետության գնահատում: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2008:

2. Սահակյան Մ. Ա., Սարգսյան Լ. Հ., Սարգսյան Ս. Դ, Տոնոյան Ռ. Ն. Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, Երևան, ԷԿԱԳ-ՄԱՀԲ, 1997:

3. Առաքելյան, Լ. Հ. Սիմոնյան, Ա. Ս. Թադևոսյան, Ա. Գ. Շահոյան, Երևան «Ճարտարագետ». Գործարար մենեջմենթ, Ուսումնական ձեռնարկ հատոր 1-ին, Երևան, «Ճարտարագետ», 2003:

4. Ефремов В. С., Стратегия Бизнеса, Финпресс, 1998.

5. Զորին Ի.Զ, Կվարտալնով Վ.Ա., Տուրիստիկա, Երևան, 2008:

INCREASING THE EFFICIENCY OF FINANCIAL AND ECONOMIC ACTIVITIES OF TOURISM ORGANIZATIONS AS A WAY OF TERRITORIAL DEVELOPMENT OF THE SECTOR

SINANYAN AREG

Postgraduate at the Chair of Finance and Management,

the Faculty of Economics, GSU,

Manager of "Adventures" Travel Office

e-mail: aregsinanyan@mail.ru

In a market economy, the territorial development of tourism is promoted by increasing the efficiency of financial and economic activities of these organizations. It is obvious that the efficiency of financial and economic activities of organizations depends on environmental factors, therefore, in order to increase the efficiency of financial and economic activities of organizations, it is necessary to minimize the costs of activities. In this regard, an attempt was made in the article to develop and solve an economic and mathematical model that will make it possible to justify the reduction in the costs of these organizations for the provision of services. It is clear that costs reduction will have a significant impact on further territorial development of tourism.

External-internal environmental factors that affect the financial and economic activities of the organization are called business units in the professional literature. The business unit actually determines the organization's position in the market, hence, its financial stability. Therefore, without their evaluation, it is not possible to evaluate the performance indicators of the organization's financial and economic activities.



The article presents the structure of the business environment. The author proposes the economic-mathematical model of cost reduction by the tourism organizations of Gegharkunik region of the Republic of Armenia. This model was used to evaluate the effectiveness of the activities of the three organizations studied by the author: "Etna", "Joy" and "Ararat".

Keywords: *Market, tourism, factors of external and internal environment, model, gross income, expenses, net profit.*

ПОВЫШЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ФИНАНСОВО-ХОЗЯЙСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ТУРИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ КАК СПОСОБ ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ ОТРАСЛИ

СИНАНЫАН АРЕГ

*Аспирант кафедры финансов и менеджмента
экономического факультета
Гаварского государственного университета,
Менеджер туристического офиса «Адвентурес»
электронная почта: aregsinanyan@mail.ru*

В условиях рыночной экономики территориальному развитию туризма способствует повышение эффективности финансово-хозяйственной деятельности этих организаций. Эффективность финансово-экономической деятельности организаций зависит от множества факторов, следовательно, с целью повышения эффективности финансово-экономической деятельности организаций необходимо минимизировать расходы. В связи с этим в статье была предпринята попытка разработать экономико-математическую модель, которая даст возможность обосновать снижение расходов этих организаций на оказание услуг. Сокращение расходов окажет существенное влияние на дальнейшее территориальное развитие туризма.

Внешние и внутренние факторы, влияющие на финансово-хозяйственную деятельность организации, в научной литературе называются бизнес-единицами. Бизнес-единица фактически определяет положение организации на рынке, а значит, и ее финансовую устойчивость. Поэтому без их оценки невозможно оценить показатели эффективности финансово-хозяйственной деятельности организации. Региональному развитию туризма в условиях

рыночной экономики способствует повышение эффективности финансово-экономической деятельности организаций этой сферы.

В статье представлена структура бизнес-среды. Автор предлагает экономико-математическую модель снижения затрат туристскими организациями Гегаркуникской области Республики Армения. Данная модель использовалась для оценки эффективности деятельности трех изученных автором организаций: «Этна», «Джой» и «Арарат».

Ключевые слова: рынок, туризм, факторы внешней и внутренней среды, модель, валовой доход, расходы, чистая прибыль.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.03.2022թ.:

Հոդվածը գրախոսվել է 27.03.2022թ.: